

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր միջուկային անվտանգության
կարգավորման պետական կոմիտեի նախագահի
2010թ. 12 հոկտեմբերի N 317-ն հրամանի

ԿԱՐԳ

**ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՄ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ՍԱՐՔԵՐԻ ԿԱՄ ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ՝ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ԿՈՂՄԻՑ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն փաստաթղթի պահանջները տարածվում են այն լիցենզավորված անձանց վրա, որոնք օգտագործում են ռադիոակտիվ նյութեր կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքեր կամ գեներացնող ճառագայթման աղբյուրներ (այսուհետ՝ իոնացնող ճառագայթման աղբյուրներ):
2. Սույն փաստաթղթով սահմանվում են ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմին՝ ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) ներկայացվող հաշվետվությունների տեսակները, դրանց ներկայացման ժամկետները, դրանց կառուցվածքի ու բովանդակության նկատմամբ պահանջները:
3. Ճառագայթային անվտանգության վիճակի վերաբերյալ հաշվետվությունները Կոմիտե են ներկայացվում լիցենզավորված իրավաբանական անձի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ ուղեկցական գրությամբ:

II. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Ճառագայթային անվտանգության վիճակի վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունները լինում են.
 - 1) պարբերական հաշվետվություններ.
 - 2) օպերատիվ հաշվետվություններ (հաղորդագրություններ).
 - 3) ամփոփիչ հաշվետվություններ:
7. Պարբերական հաշվետվությունները պարունակում են հաշվետու ժամանակահատվածում օբյեկտում կամ իրականացվող աշխատանքների ժամանակ ճառագայթային անվտանգության վիճակը բնորոշող տեղեկություններ: Դրանք ներկայացվում են սույն կարգով սահմանված ժամկետներում:
8. Օպերատիվ հաշվետվությունը (հաղորդագրությունը) ներկայացվում է իրականացվող գործունեության ժամանակ տեղի ունեցած միջադեպի դեպքում և նպատակ ունի տեղեկացնել միջադեպի հետևանքով օբյեկտում ճառագայթային անվտանգության վիճակի փոփոխման մասին:

9. Ամփոփիչ հաշվետվությունը ներկայացվում է միջադեպի քննության ավարտից հետո և ամփոփում է քննության արդյունքները:

10. Հաշվետվությունները պետք է տպված լինեն Ա4 ֆորմատի սպիտակ թղթի մեկ կամ երկու երեսի վրա, գրամեքենայի կամ համակարգչի տպող սարքի կիրառմամբ, 12 չափսի տառատեսակով, տողերի մեկ ու կես տիրույթ հեռավորությամբ: Էջերը ձախ և աջ կողմերից, ինչպես նաև վերևից ու ներքևից պետք է ունենան ազատ դաշտեր համապատասխանաբար 30, 10, 15 և 20 մմ լայնությամբ:

Հաշվետվության մեջ ներառված գրաֆիկական նյութերը կարող են տպվել Ա3 ֆորմատի սպիտակ թղթի վրա՝ կարդալու համար հարմար մասշտաբով:

11. Հաշվետվությունների բոլոր էջերը պետք համարակալվեն արաբական թվանշաններով:

III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

12. Պարբերական հաշվետվությունները ներկայացվում են հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում: Հաշվետու ժամանակահատվածները, կախված օգտագործվող իոնացնող ճառագայթման աղբյուրի (աղբյուրների) տեսակից և իրականացվող աշխատանքների բնույթից, ներկայացված են աղյուսակ N 1-ում:

Աղյուսակ N 1. Իոնացնող ճառագայթման աղբյուրներ օգտագործող լիցենզավորած անձանց հաշվետու ժամանակահատվածները

Հ/Հ	ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԻՈՆԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ ՏԵՄԱԿԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԸ	ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԶՍԱՎԱԾԸ (ամիս)
1.	ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՍԱՐՔ	
1.1.	Ճառագայթահարիչ թերապևտիկ նպատակով օգտագործվող	6
1.2.	Ճառագայթահարիչ արդյունաբերական կամ գիտահետազոտական նպատակով օգտագործվող (պարունակվող ռադիոիզոտոպային աղբյուրի ակտիվությունը կամ աղբյուրների գումարային ակտիվությունը ≥ 1000 Ci)	6
1.3.	Ճառագայթահարիչ արդյունաբերական կամ գիտահետազոտական նպատակով օգտագործվող (պարունակվող ռադիոիզոտոպային աղբյուրի ակտիվությունը կամ աղբյուրների գումարային ակտիվությունը < 1000 Ci)	12
1.4.	Ռադիոիզոտոպային աղբյուր պարունակող չափիչ կամ գրանցող սարք	24
1.5.	Ռադիոիզոտոպային աղբյուր պարունակող կարոտաժային սարք	12
1.6.	Ռադիոիզոտոպային աղբյուր պարունակող հոսանքի աղբյուր	12
2.	ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՍԱՐՔ ԿԱՄ ՏԱՐԲԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԱՐԱԳԱՑՈՒՑԻՉ	
2.1.	Ռենտգենյան սարք թերապևտիկ նպատակով օգտագործվող	6
2.2.	Տարրական մասնիկների արագացուցիչ թերապևտիկ	6

Հ/Հ	ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԻՈՆԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԸ	ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ (ամիս)
	նպատակով օգտագործվող	
2.3.	1-ին կատեգորիայի ռենտգենյան սարք ախտորոշման նպատակով օգտագործվող	12
2.4.	2-րդ կատեգորիայի ռենտգենյան սարք ախտորոշման նպատակով օգտագործվող	12
2.5.	3-րդ կատեգորիայի ռենտգենյան սարք ախտորոշման նպատակով օգտագործվող	12
2.6.	1-ին և 2-րդ դասի տարրական մասնիկների արագացուցիչ արդյունաբերական կամ գիտահետազոտական նպատակով օգտագործվող	12
2.7.	3-րդ դասի տարրական մասնիկների արագացուցիչ արդյունաբերական կամ գիտահետազոտական նպատակով օգտագործվող	24
3.	ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ	
3.1.	Բաց ռադիոիզոտոպային աղբյուրներ միջուկային բժշկության նպատակով օգտագործվող	12
3.2.	Փակ ռադիոիզոտոպային աղբյուրներ սարքերի կարգաբերման նպատակով օգտագործվող	24
3.3.	Բաց ռադիոիզոտոպային աղբյուրներ սարքերի կարգաբերման նպատակով օգտագործվող	24

13.Օպերատիվ հաշվետվությունները ներկայացվում են միջադեպից հետո 24 ժամվա ընթացքում:

14.Ամփոփիչ հաշվետվությունները ներկայացվում են վթարի կամ միջադեպի պատճառների ու հետևանքների քննության ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:

IV.ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

15.Պարբերական հաշվետվությունների բովանդակությունը պայմանավորված է օգտագործվող իոնացնող ճառագայթման աղբյուրի (աղբյուրների) տեսակով և օգտագործման բնույթով:

16.Բոլոր պարբերական հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

1) հաշվետվություն ներկայացնող լիցենզավորված անձի տվյալները.

- իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գրանցման հասցեն, գործունեություն իրականացնելու վայրը (վայրերը) և հասցեն (հասցեները), կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե).
- անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, հայրանունը, ազգանունը, բնակության հասցեն, գործունեություն իրականացնելու վայրը (վայրերը) և հասցեն (հասցեները) կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե).

2) հաշվետու ժամանակահատվածը.

3) գործունեության համար տրված լիցենզիայի համարը, ամսաթիվը եւ տարեթիվը, գործողության ժամկետը.

4) օգտագործվող իննացնող ճառագայթման աղբյուրի (աղբյուրների) տեսակը (փակ ռադիոիզոտոպային աղբյուր, բաց ռադիոիզոտոպային աղբյուր (ռադիոակտիվ նյութ), ռենտգենյան սարք, տարրական մասնիկների արագացուցիչ).

5) օգտագործման վայրը (բաժանմունքը, պրոցեդուրային սենքը կամ աշխատանքների իրականացման վայրերը (տարբեր վայրերում աշխատանքների կատարման դեպքում, օրինակ՝ գազատար կամ ջրատար խողովակների մետաղի չքայքայող հսկողություն իրականացնելիս).

6) աշխատատեղում և օգտագործման վայրին հարող տարածքներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ռադիոմետրիկ չափումների արդյունքները.

7) հաշվետու ժամանակահատվածում օբյեկտում անցկացված տեսչական ստուգումների քանակը, տեսչական ստուգումների արդյունքում տրված կարգադրագրերի կատարման վիճակը:

17. Արտաքին և ներխոռոչային ճառագայթային թերապիայի նպատակով ռադիոիզոտոպային աղբյուրի (աղբյուրների) օգտագործման դեպքում հաշվետվությունները, բացի 16-րդ կետում նշված տեղեկությունների, պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

1) օգտագործվող աղբյուրի (աղբյուրների) քանակը և բնութագիրը (բնութագրերը)՝ համաձայն աղբյուրների հաշվառման գրանցամատյանի.

2) չօգտագործվող (պահեստավորված) աղբյուրի (աղբյուրների) բնութագիրը (բնութագրերը)՝ համաձայն աղբյուրների հաշվառման գրանցամատյանի.

3) հաշվետու ժամանակահատվածում անցկացված ճառագայթահարման պրոցեդուրաների և ճառագայթահարված հիվանդների թիվը.

4) ճառագայթահարմամբ բուժում անցնելու բուժող բժշկի կողմից գործուղում ունեցող հիվանդների թիվը.

5) հաշվետու ժամանակահատվածում հսկման գոտում աշխատող անձնակազմի թիվը և ճառագայթահարման կոլեկտիվ դոզան (ըստ անհատական դոզիմետրիկ մոնիթորինգի տվյալների).

6) հաշվետու ժամանակահատվածում հսկման գոտում աշխատող անձնակազմի անհատական առավելագույն արդյունարար և համարժեք դոզաները (ըստ անհատական դոզիմետրիկ մոնիթորինգի տվյալների).

18. Բուժման կամ ախտորոշման նպատակով ռենտգենյան սարքի (սարքերի) կամ տարրական մասնիկների արագացուցչի (արագացուցիչների) կամ ինտերվենցիոն ռադիոլոգիայի (անգեոգրաֆիա, կորոնոգրաֆիա) օգտագործման դեպքում հաշվետվությունները, բացի 16-րդ կետում նշված տեղեկություններից, պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

1) օգտագործվող սարքի (սարքերի) քանակը և բնութագիրը (բնութագրերը)՝ համաձայն աղբյուրների հաշվառման գրանցամատյանի.

2) հաշվետու ժամանակահատվածում անցկացված ճառագայթահարման պրոցեդուրաների և ճառագայթահարված պացիենտների թիվը.

3) ճառագայթահարմամբ ախտորոշում անցնելու բուժող բժշկի կողմից ուղեգիր ունեցող հիվանդների թիվը.

4) հաշվետու ժամանակահատվածում հսկման գոտում աշխատող անձնակազմի թիվը և անհատական առավելագույն արդյունարար և համարժեք դոզաները (ըստ անհատական դոզիմետրիկ մոնիթորինգի տվյալների)։

19. Միջուկային բժշկության նպատակով ռադիոիզոտոպային բաց աղբյուրների (ռադիոակտիվ նյութերի) օգտագործման դեպքում հաշվետվությունները, բացի 16-րդ կետում նշված տեղեկություններից, պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

1) հաշվետու ժամանակահատվածում օգտագործված ռադիոակտիվ նյութերի քանակը և բնութագիրը (բնութագրերը)՝ համաձայն աղբյուրների հաշվառման գրանցամատյանի.

2) հաշվետու ժամանակահատվածում անցկացված ճառագայթահարման պրոցեդուրաների և ճառագայթահարված պացիենտների թիվը.

3) միջուկային բժշկության մեթոդով ախտորոշում անցնելու բուժող բժշկի կողմից գործուղում ունեցող հիվանդների թիվը.

4) հաշվետու ժամանակահատվածում ռադիոակտիվ նյութերի հետ աշխատող անձնակազմի քանակը և անհատական առավելագույն արդյունարար և համարժեք դոզաները (ըստ անհատական դոզիմետրիկ մոնիթորինգի տվյալների)։

5) աղբյուրների օգտագործման արդյունքում առաջացած ռադիոակտիվ թափոնների քանակը, ակտիվությունը.

20. Դենտալ ռենտգենյան սարքի (սարքերի) օգտագործման դեպքում հաշվետվությունները, բացի 16-րդ կետում նշված տեղեկություններից, պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

1) օգտագործվող սարքի (սարքերի) քանակը և բնութագիրը (բնութագրերը)՝ համաձայն աղբյուրների հաշվառման գրանցամատյանի.

2) հաշվետու ժամանակահատվածում անցկացված ճառագայթահարման պրոցեդուրաների քանակը.

3) հաշվետու ժամանակահատվածում անձնակազմի անհատական առավելագույն արդյունարար և համարժեք դոզաները (ըստ անհատական դոզիմետրիկ մոնիթորինգի տվյալների)։

21. Արդյունաբերական, գյուղատնտեսական, գիտական և կրթական նպատակներով իրնացնող ճառագայթման աղբյուրների օգտագործող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող պարբերական հաշվետվությունները, բացի 16-րդ կետում նշված տեղեկություններից, պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

1) օգտագործվող աղբյուրի (աղբյուրների) քանակը և բնութագիրը (բնութագրերը)՝ համաձայն աղբյուրների հաշվառման գրանցամատյանի.

2) ժամանակավորապես չօգտագործվող (պահեստավորված) աղբյուրի (աղբյուրների) բնութագիրը (բնութագրերը)՝ համաձայն աղբյուրների հաշվառման գրանցամատյանի.

3) հաշվետու ժամանակահատվածում աղբյուրի (աղբյուրների) օգտագործման նպատակը և վայրը (վայրերը).

4) հաշվետու ժամանակահատվածում ճառագայթահարված անձնակազմի և անհատական առավելագույն արդյունարար և համարժեք դոզաները (ըստ անհատական դոզիմետրիկ մոնիթորինգի տվյալների)։

22. Սույն կարգի 16-ից 21-րդ կետերում նշված հաշվետվությունները պետք է պարունակեն նաև հետևյալ տեղեկությունները.

- 1) հաշվետու ժամանակահատվածում օգտագործվող սարքավորումների խափանման դեպքերը, սարքավորման չօգտագործման ժամանակահատվածը, վերանորոգող կազմակերպությունը (անձը), վերանորոգման (վերանորոգումների) հակիրճ նկարագրությունը (ինչ է փոխվել կամ ինչպես է վերանորոգվել)։
- բ) հաշվետու ժամանակահատվածում սարքավորումների կարճատև և երկարատև կայուն աշխատանքի ստուգման/թեստավորման արդյունքները։
- գ) հաշվետու ժամանակահատվածում անձնակազմի պատրաստման և վերապատրաստման մասին։
- դ) հաշվետու ժամանակահատվածում տեղի ունեցած միջադեպերի մասին (եթե եղել են)։ Պետք է հղում կատարվի դրանց վերաբերյալ ամփոփիչ հաշվետվություններին։
- ե) հաշվետու ժամանակահատվածում որակի ապահովման միջոցառումների վերանայման մասին (եթե տեղի է ունեցել)։

**V.ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

23.Օպերատիվ հաշվետվությունները (հաղորդագրությունները) պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները։

- 1) հաշվետվություն ներկայացնող լիցենզավորված անձի տվյալները։
 - իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գրանցման հասցեն, գործունեություն իրականացնելու վայրը (վայրերը) և հասցեն (հասցեները), կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե)։
 - անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, հայրանունը, ազգանունը, բնակության հասցեն, գործունեություն իրականացնելու վայրը (վայրերը) և հասցեն (հասցեները) կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե)։
 - գործունեության համար տրված լիցենզիայի համարը, ամսաթիվը եւ տարեթիվը, գործողության ժամկետը։
- 2) միջադեպի բնույթը (անձնակազմի/հիվանդների գերճառագայթահարում, վթար, հրդեհ, աղբյուրի վնասում, աղբյուրի գողություն և այլն) և գրանցման ժամանակը։
- 3) միջադեպի նախնական պատճառը։
- 4) ճառագայթահարված անձնակազմի, իսկ առողջապահական հիմնարկում՝ նաև պացիենտների թիվը։
- 5) աղբյուրի օգտագործման կամ պահման համար նախատեսված սենքում և դրան հարակից տարածքներում գրանցված գամմա ճառագայթման հզորությունը, ռադիոակտիվ աղտոտվածությունը և ճառագայթային անվտանգության վիճակը բնորոշող այլ տվյալներ։
- 6) միջադեպի վերացմանը կամ դրա հետևանքների մեղմացմանն, ինչպես նաև անձնակազմի ու այլ անձանց պաշտպանությանն ուղղված գործողություններ հակիրճ նկարագրությունը։
- 7) հաշվետվությունն (հաղորդագրությունն) ուղարկող անձի պաշտոնը, անունը, ազգանունը։
- 8) հաշվետվության (հաղորդագրության) ուղարկման ժամանակը (տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, րոպեն)։

VI.ԱՍՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

24.Ամփոփիչ հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

- 1) հաշվետվություն ներկայացնող լիցենզավորված անձի տվյալները.
 - իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գրանցման հասցեն, գործունեություն իրականացնելու վայրը (վայրերը) և հասցեն (հասցեները), կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե).
 - անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, հայրանունը, ազգանունը, բնակության հասցեն, գործունեություն իրականացնելու վայրը (վայրերը) և հասցեն (հասցեները) կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե).
- 2) գործունեության համար տրված լիցենզիայի համարը.
- 3) միջադեպի բնույթը (անձնակազմի/հիվանդների գերճառագայթահարում, վթար, հրդեհ, աղբյուրի վնասում, աղբյուրի գողություն և այլն) և գրանցման ժամանակը.
- 4) միջադեպի վերացման ժամանակը.
- 5) միջադեպի վերացմանը կամ դրա հետևանքների մեղմացմանն, ինչպես նաև անձնակազմի ու այլ անձանց պաշտպանությանն ուղղված գործողություններ մանրամասն նկարագրությունը.
- 6) միջադեպի հետևանքով գերճառագայթահարված անձանց վերջնական թիվը.
- 7) միջադեպի հետևանքով անձնակազմի, պացիենտների և (կամ) բնակչության կազմից առանձին անձանց ստացած վերջնական (զումարային) դոզաները
- 8) աղբյուրի օգտագործման կամ պահման համար նախատեսված սենքում և դրան հարակից տարածքներում կամ աշխատանքների իրականացման վայրերում (տարբեր վայրերում աշխատանքների կատարման դեպքում, օրինակ՝ զագատար կամ ջրատար խողովակների մետաղի չքայքայող հսկողություն իրականացնելիս) անցկացված ճառագայթային մոնիթորինգի վերջնական արդյունքները.
- 9) միջադեպի գնահատականն ըստ INES –ի սանդղակի.
- 10) միջադեպի առաջացման արմատական պատճառը (պատճառները)
- 11) քաղած դասերը, միջադեպի կրկնման կանխման համար ձեռք առնված միջոցառումները.
- 12) հաշվետվությունն ուղարկող անձի պաշտոնը, անունը, ազգանունը.
- 13) հաշվետվության ուղարկման ժամանակը (տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, րոպեն):